Քահանայից ու պաշտօնեկից այրիներուն ու որբերուն համար եղած գանձանակներուն կառավարութիւնը կյանձնուի մասնաւոր Խնամակալներու՝ վիճակաւոր Առաջնորդին անմիջական տեսչութեանը տակ : Այս խնամակալները երեք հոգի են՝ վիճակին ամուսնացեալ եկեղեցականաց նախապատիւներէն ընտրուած՝ վիճակաւոր Առաջնորդին ձեռքովը : Անոնք այն բարեգործութիւնը կատարելն յանձն կտանուն առանց

ամենեւին վարձատրութիւն մը ընդունելու անոր համար :

ձԼԶ.

Խնամակալները կընդունին թէ գանձանակաց եւ թէ գրքերուն մէջ եղած դրամները, եւ անոնց ճիշդ հաշիւները կրնան :

ձԼԷ.

Խնամակալները իրենց դատողութեանն համեմատ՝ կորոշեն քահանայից ու պաշտօնեկից որբերուն ու այրիներուն տրուելու նպաստները. բայց առաջ ճիշդ քննութեամբ կստուգեն թէ անոնց ստոյգ պիտոյքը որչափ է, առանց ամենեւին աջառութեան կամ կուսակցութեան :

ձԼԸ.

Խնամակալները քահանայից ու պաշտօնեկից այրիներուն եւ որբերուն նպաստները որոշելու տեսն այս կանոնները պիտի պահեն .

Ա. Զանալ սահմանել տարեկան հաստատուն նպաստներ, զգուշանալով ըստ կարի մէկ անգամ մը միայն տրուած տուրքերէ :

Բ. Մէկ անգամով մը տրուած նպաստները մի եւ նոյն անձին տարին մէյմը միայն հաղորդել, եւ ոչ անկի :

Գ. Նպաստները սահմանել գլխաւորապէս, ա, այն այրիներուն ու որբերուն որ ամենեւին կարողութիւն չունենալով իրենք զիրենք կերակրելու, այնպիսի ազգականներ ալ չունին որ կարենան կամ յօժարին գանոնք պահելու. յ, այն այրիներուն որ աղքատ ըլլալէն ի գատ՝ շատ գաւկի ալ տեր են. եւ զ, անոնց որ ոչ ճնողք ունին եւ ոչ մօտիկ ազգական, ու որբ եւ աղքատ են :

Դ. Քահանայից եւ եկեղեցւոյ պաշտօնեկից այրիներուն նպաստ մատուցանել մինչեւ որ նորէն ամուսնանան, որբ աղջկանց՝ մինչեւ որ պակուին, իսկ որբ մանչերուն՝ մինչեւ որ յարբունս հասնին կամ եկեղեցական դպրատուն մտնեն :

ձԼԹ.

Խնամակալները ամէն ամիս կստուգեն արկղին վիճակը՝ եպիսկոպոսական Ստեանին անդամներէն մէկուն առջեւը, կամ ուրիշ անձի մը՝ որ նոյն Ստեանէն որոշուած կըլլայ :

ձԽ.

Երեք ամիսը մէյմը խնամակալները մանրա-

մասն տեղեկութիւն կուտան եպիսկոպոսական Ատենին՝ դրամական գումարին եկամուտներուն՝ ծախքին ու մնացորդին վրայ, տարւոյն վերջնայ հաշիւ իրենց ամեն գործողութեանցը համար :

ՃԽԱ.

Խնամակալաց դեմ եղած գանգատները իւրա-

քանչիւր վիճակի եպիսկոպոսական Ատենին կը տրուին :

Ստորագրեալ

Նախագահ Կայսերական Խորհրդարանին

ԿՈՄՍ ՆՈՎՈՍԻՅՈՎ. :

Հ Ա Յ Կ Ա Ջ Ե Ա Ն Ս ՈՒ Ր Հ Ա Ն Գ Ա Կ

Ի ՍՂԱԻ ՄԱՀ

ԱՐԲՈՒՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

ՊԵՐՃԱՊԱՏԻԻ Տ. ՆԻԿՈՂՈՍԻ ՊԱԼԵԱՆ,

ՅԻՇԱՏԱԿ ՏԻՈՒՐ.

Հոգոյս ի խոր ազդեան, Ոգիդ տխրական, եւ ի հիւստեամ բանիցս իմ վեր օգնական. Գնյդ նպաստիւք երկունք մտացս ցառալիք Առջեմ ծնունդ. զի եմ անգոր եւ ոչ ժիր: Տնոր ինձ ողբալ բզբարեւարն Արամեան, Չոր անորրոտունջ զոնեաց Պալեան Գերդաստան. Ա՛ն խորհրդոյս դատն յիշատակ տրամազգեաց Խռով. բզմիտս դրնե փականս իմ շրբանց: Իցէ՛ նդ սրտիս պարզեր լեզուս ապիկար՝ Ըզբաղցրագութ բարոյս Վեհիդ անվբբար. Չոյզ ընդ չքնաղ ձրիցն ազնիւ տիրանուեր Գորովաշարժ առնուլ աստե՛ն ի պատկից: Մշտագուարբ քաղցրիկ դիմացն գեղ ժրպիտ, Ազդեր հրճուանս յորբացելոց տրխուր սիրտ. եւ հայեցուած նեղիկն աչաց կարեկից Խօսեր զօգցես ի ներքս ի խոր դժբաղդից: Չեր բտ դիպաց՝ թե աուրս առատ բաշխեր յորդ, Թե աղքատին վշտաց լիներ բաժանորդ. Չի բանկազին կենաց նորին նեշտ արեւ. Յերկնից անշուշտ կարօտելոց էր պարգև: Իսկ բզմտացն փետմ հանճար եւ զկորով՝ Չոր համազգեացն էր նուիրեալ ի գորով. Ընդ պանծալի ճարտարութեանն զեղարուեստ Ո՞ ժառանգե առնուլ արդեօք ի գովեստ: Ընդ սիրասուն հարագասիցն՝ մինչ յաւարտ, Առաքինոյ չօր իւր էր տանն չքնաղ զարդ. Այլ այն գունակ մինչ բոյրեր գիւր շրջան, Ասո՞ղ՝ յանկարժ ճրագունք կենացն վաղ շիջան: Մապեա անա եւ ցորենոյն հասկ ատօք, Մինչ կոր լերկիւր պարարտ զանդին լրնու գոգ. Յայնժամ մանգաղ զօգցես անգութ սայրասուր Հնձե գորայն, ցօղունքն անդէն ալլին նուր: Տես սրտաշարժ ինձ տեսարան. զի եւ մինչ Վերնոյն ըզկամս բարօք գիտաց զոլ անջինջ, Գորովեցաւ անդ Անմեղին սիրտ անբիժ,

Չի չուե յաստեացս բողեալ ըզտեանկն ի բախիժ : Անդէն երդմներ գիւր ընտանիս բարեպաշտ, Առ տառապեալս միշտ կարեկից գոլ եւ հաշտ. Մինչդեռ անդուստ հրեշտակ գուարբ նուիրեր Առ Սիրելին ըզբերկրագեացն հրաւեր: « Աբի, ասե, ի նոր գնալ ի հանդես, « Անճան Աբբայն բարեացդ ըզգորժ շատ ետես. « Հրաւիրակիս կայ վե՛ն պատգամ եւ հրաման, « Վարել ըզքեզ յանձեռակերտն իւր խորան. « Թող աստ ապա ճարտարութեանց քոց շինուած « Քոյդ հանճարոյ կացցեն վրկալք. Դու գբո վարժ « Ազնիւ սրտիդ փութբա առնուլ ի յերկին. « Կամարդ անհիմն է զեղազոյն քան զեռօին » : Ընդ Չուարբնոյն ճախրե՛ նոզին յամպս ի վեր, Մինչ իւր Ծնողն ըզման նորին լայր կոծեր. Շոխիզն հարաւ. գոժեաց եւ ձայն տխրական, Հանգեաւ՝ ասե՛ն, Նիկողայոս վե՛ն Պալեան: Դու ինձ ներեա շիրմիդ կացեալ ատընբեր Ողբ սրտառուջ Հանգուցելոյդ տալ ի նուեր. եւ զի ինձ քնար ոչ պակասե տխրաձայն, Այերքն անա ընդ իս լացցեն զՔեզ համայն: Իսկ իմ մատունք բել անբզգայ հարցնն ոչ, Այլ քան ի քնար բոլ իմ սրտին ի խոռոջ՝ Չայն հնչեաց հառաչանաց. ունիմ լար, Չի տրամութեամբ աղիքս եղն ոլորեալ:

Յաշակերտաց Ուսումնարանի  
Մայր-եկեղեցոյ  
ԵՂԻՍՉԱՐ Մ. ՄԵԼԻՔԵԱՆ.

16 մարտ. 1858 ի Կ. Պօլիս.  
Ի Գում-Գալիու:

ՕՏԱՊԱՇԵԱՆ Տ. ԳԷՈՐԳ. — « Սերաստիայէն զրուած նամակները տրամութեամբ սրտի կը ծանուցանեն Սերաստիոյ Հայոց երեսելիներէն Օտապաշեան Մանուէի Տեսան Գեորգայ ցառալի մանր: Այս բարեյիշատակ անձը մեծ յարգ եւ համարում ստացած էր իր ազգօգուտ գործերովն ու աստուածահանոյ բարբարութիւններովը՝ որոց մեջ երախտագետ գովութեամբ կը լիշուի Սերաստիոյ մեջ յանուն սրբոց Թարգմանչաց կառուցեալ հոյակապ դպրոցը, որ ազգասեր հանգուցեալը իւր քսակէն

շինած է հարիւր հազար դուռուշէն աւելի ծախք ընելով, եւ անոր պայծառութեանն ու յարատեւ բարեկարգութեանը համար անդադար նպատակով: Ասկէց զատ վախճանելու ատենը տասն հազար դուռուշ այ նոյն քաղաքին մէջ հաստատուած Սենթբերինեան ուսումնասիրական ընկերութեանը շրնորհներ է կտակաւ. նմանապէս բոլոր վանօրէից եւ աղքատաց ալ առատաձեռն շնորհներ ըրեր է: Իւր ամենէն սիրելի փափաքը եկեղեցեաց եւ դպրատանց պայծառութիւնը եւ ուսմանց ծաղկիլը եղած էր. այս նպատակաւ իւր երեք եղբոր որդիներէն մէկը զՊ. Սերորէ Ռտապաշեան Փարիզի Հայկազեան վարժարանը խրկած էր, ուր մինչեւ հիմա կ'կենայ ուսմունք սովորելու եւ իր հանգուցեալ ձօրեղբորը բազմանքին համեմատ կատարեալ կրթութիւն ստանալու, որպէս զի օգտակար անդամ մը ըլլայ Ազգին եւ իւր բարեմամբս. զերդաստանին: Հանգուցեալ Մանտեսի Տէր Գեորգ իր խոնիմ եւ հանձարեղ վարուքը Սերաստիոյ բոլոր այլակրօն ընակէաց ալ մեծ կակիծ տուեր է: Վսեմափայլ կուսակալը յատկապէս հրաման ըրեր է մեծանաղես յուզարկաւորութիւն մը ընելու հանգուցելոյն, եւ մարմինը իւր պարտոխն անջեռն անցունելու որ վերջին անգամ տեսնէ զանիկայ:»

(ՄԱՍԵ.)

**ՏԱՌՈՒՏԵԱՆ ԿԱՐՊԱՅԵՏ ԷՖԷՆՏԻ.**— Գանուրի նաւարկութիւնը կանոնաօրէն յանձնարարական ժողովին Բ. Գրան կողմանէ անդամ Տառուտեան մեծարգոյ Կարապետ Էֆենտին՝ Աւստրիոյ, Պաիերի, եւ Վիլբրեմպերկի բազաւորաց կողմանէ հետեւեալ պատուանշաններն ընդունեցաւ. Աւստրիոյ՝ Փրանչիսկոս Յովսէփայ կարգին հրամանատարութեան պատուանշանը: Պաիերի բազին երրորդ պատուանշանը: Վիլբրեմպերկի բազին երրորդ պատուանշանը: (ՄԵՃՄՈՒՅՑ ՀԱՎԱՏԻՍ.)

**ՏԱՌՈՒՏԵԱՆ ՏԱԿՈՒՐ ԷՖԷՆՏԻ,** որ արքունի բժշկական զոյրօցին դասատուներէն մէկն է՝ չորրորդ կարգի Մեծիտիկ պատուանշանն ընդունեցաւ: (ԿՈՅՆ.)

**ՄՈՒՏՈՎԱԼԱՔԻՌՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՔ.** — Հետեւեալ նամակին մէջ ազնիւ գրողին ազգասիրական ոգին փայլելուն և տուած ազգային տեղեկութեանցը համար արժան կ'համարվմք մեր ընթերցողացը հաղորդել:

*Դերագախա Աստուածարեալ Տեառն Տեառն Ամբոստայ Վարդապետի Գարխայեան Ազգասեր Սուրբ Հօր,*  
*Մախր Սուրբ Աջոյն համբոյր խոնարհութեամբ:*

Միջդեռ յամենայն ճշմարտասիրացն խմբից արժանագով դրօտատանաց եւ շնորհակալութեան բանք իբրոյ ի տառադան տառադանս յամենայն կողմանց մատուցանելին առ ճշմարտասեր Սուրբ Հարօղ ընդ մեծի եւ անընկճելի առաքինութեան եւ ազգասիրական ձեռոց հանդիսից, եւ անա յայնմնեալ եւ այսր համակրութիւն իմն զարմանասքանչ ճմլեցուցաներ եւ զիմ սիրտ կարօզին բերիլ ընդ ձեզ հոգեխառնիլ, եւ զսրտի իմոյ եւ զիմոցս հայրենակցաց խոնարհական մեծարանս լիասիրտ եւ վարերան շնորհապարտութեամբ եւ բարեմաղբութեամբ առ ոտս բարերար նահատակացդ Ազգիս սիրուել տարածել: Բայց սակայն եւ գլխովին յանձանօրից գոյով իմ անցեալ ի կարգ, զի մի ինչ գվայելութեամբ երեսեցայց անցեալ զանցեալ, յակամայից իմն հարկեցայ ընդ վարագորտաւ ունել թղսրտի իմոյ մինչեւ, ցայսօր գեռանդն բոցատիլայ ըստ զօգ հրոյն նեկեայ: Եւ անա աստանօր տեսցէ ինձ աշխարհ զանկեղծաւոր սիրոյ մագնիսական զօրութեանն նորասքանչ հանդեսար բեպեա եւ անձանօր յանձնէ եւ անարժան գլխովին շնաշխարհիկ ձեր սիրոյ, այստե ամենայնիւ խափան եւ ոչ մի ինչ

կարաց արգելու գղեմ ունել զմարդասիրութեան ձերոյ առ ի ընդատաշել կանխել, եւ իբրախոյս արժարձել սիրարօր կրիցս զգաժմանց ընդ ձեռն համբուրելի եւ անգին յիշատակի Տէրունեան մատենին զոր ընկալայ ձեռամբ յարգի Պարոն Գարբիէի Մտերեան: — Հայր իմ, Ազգասեր Սուրբ Հայր, անակունեցիլ այդ հանդիպումն Հայրենական ձեր սիրոյ՝ յազշութիւն կրեաց գմիսս զլխովին. եւ զիմըղ ինձ ննարաւոր ի բան եւ ի մելան զարժանաւորն երախտագետ մտօք յայտնել ձեզ շնորհապարտութիւն: Մատեանն սքանչելի, նոյն ինքն եւ եր իւրովն աստուածախօսիկ ոճիւ յարմարեցի: ձեզ շնորհակալութիւնս վայելուցս ընդ մեծի սիրոյ շնորհիլ: Կացցէ այն ուրեմն առ իս յորդոց յորդիս երկրպագելի սիրոյ պանծալի յիշատակ, եւ ես բուռն հարկեց խոնարհական մտօք բերիլ յազգարարութիւն լրոյ իրիք ցնձատիր բերեալ ամենայն Հայաստանից, որպէս եւ ձերոց իսկ ազգասեր սրտից:

Ազգաբն ճանաչէ Գերագաւորութիւն ձեր գևապելաշնորհ Սարգիս Սրբազանն Արքեպիսկոպոսն Անդրեանուպօլսոյ, զայն զոր յիշատակեալ էիք նաեւ ի մէջ պատուական Մատեաց Աղաւնոյ անցելոյ ամին. եւ զիտեմք նուաստեալ րէ ճանաչէք զնա, ըստ որում եւ նորին Սրբազնութիւնն բազում անգամ մեծաւ զովութեամբ յիշէր զցանկալի տեսութիւն ձեր վայելեալ ի Պատրիարքարանն Պօլսոյ: — Եւ անա քաղցր է ինձ ժանուցանել զանպայման ցնձութիւն եւ զգոծունակութիւն Հասարակութեան Հայոց Կանանգացս գմմանէ, եւ զերախտագիտութիւն նոցա ի դեմս Հայրախնամ հսկողութեան Ամենազատիւ Վեհափառ Սրբազան Պատրիարգին, եւ Ազգախնամ Գերագոյն եւ Հոգևոր ժողովոցն, զի յայս նուազ շնորհ արարին տարակացելոյ բանաւոր Հօտիս առժամանակեալ այցելութեամբ զայնպիսի ճշնարիտ եւ քաջ Հովիւ մի սլարգեալ: Որ հոգեզօսն եւ իմաստուն Հովութեամբն, այլ եւ վեհանձնական եւ միանգամայն եւս քաղցրաբարոյ գնացիւքն՝ սիրելիէ համօրէն Հայոց Մոլտովայաբոյ, եւ պատկառելի եւս օտար ազանց:

Սարգիս Սրբազանն ժամանեաց նմա ի քաղաքս մեր ի 15 անցելոյն յունուարի, ընդ հոգեծին որդոյ իւրում շնորհալիայ Տէր Մեսրոպ Վարդապետի, ժանուցանելոյ ձեզ Տիրացու Կարապետ Սարկաւազ անուամբ, եւ զրազիլ ի Պատրիարքարանն Պօլսոյ, զորոց առեալ զյուր ուրախաօր գայտեանն, երկուք ոմանք յերեսելեաց Ազգիս աուրբ յատաշ զիմաւորեցին զնոսա չորս ժամու ճանապարհաւ նեռի ի քաղաքես: Իսկ ապա յերկրորդում աուր լրտեսեալ զգալուստ նոցա՝ արտաքոյ քաղաքին ընդ առաջ ելին ամենայն ժողովուրդն առ հասարակ բազմութեամբ կառաց եւ նեծելոց, եւ նետիտոս գնացիւք: Ընդ որս եւ Ոստիկանութիւն քաղաքիս նեծելագօրօք ոմամք սլար արկեալ եւ սպասաւորեալ շուրջ գևառօք՝ Նորին Սրբազնութեանն՝ հանդարտ եւ հեղիկ ընթացիւք ամին զնա մինչեւ ի դուռն Մայր Եկեղեցոյ բակին:

Աստանօր յիջանել Սրբազանին ի կառացն, զիմաւորեալ զնա դատուն եկեղեցականաց համակ զգետաւորելոց՝ ընդ զղղղին բազմութեանն եւ նեջման ձայնի զանգակացն խառնեցան եւ քաղցրանուազ երգք մանկանց Գարդիին. եւ այսպէս հանդիսիւ եւ ուրախութեամբ բազմաւ մուծին զնա ի մէջ Տաճարին, ուրանօր համաօտ, բայց սրտաուղջ ատենաբանութեամբ եւ օրնութեամբ աւարտեալ զհանդէսն՝ եմուտ Սրբազանն յիւր պատրաստեալ օրեանն ի բակ եկեղեցոյն, ընդունել այցելութիւնս եւ յարգանաց շնորհաւորութիւնս յիւրաքանչիւր դասուց հանդիսականացն:

Յնա կատարելոյ այսմ այսպէս, ապա եւ Քաղաքապետ Իշխան քաղաքիս եւ Մեծապատիւ Հիւպատոսք Գաղղիոյ եւ Աւստրիոյ, որպէս եւ այլ բարձրաստիճան անձինք կկեալ ի շնորհաւորութիւն բարեմաման գայտեանն՝ Նորին Սրբազնութիւնն հանցեալ առ մէն մի ի նոցանէ կրբալ ի փոխազարձ այցելութիւն, եւ արժանավայել սրատուով ընկալալ յիւրա-

քանջիւրոցն . որով եւս քան զեւս յանկան փառք եւ պար-  
ժանք Հայկազնիցս առաջի օտարաց :

Հայս օրինակ անա Սրբազանն նաեւ յառուրս լինելութեան  
խորոյ յեաշ մայրաքաղաք՝ զնացեալ ի տեսութիւն Վսեմափայլ  
Վօկօրխոս Պէյ Տեղակալ Իշխանի երկրիս, մեծաւ սիրով եւ յար-  
զանօք ընկալաւ . եւ պատուեցաւ փոխադարձ ալցելութեամբ :

Նորին Սրբազնութիւնն բարեհաճեալ յայց ելանել նաեւ  
աշակերտեալ մանկանց Ազգային դպրոցի քաղաքիս՝ ի 29  
յունուարի ի ներկայութեան իւրում կատարեցաւ Հանդէս վե-  
ցամսեալ Հարցաքննութեանն ի Հայկաբանութեան եւ յԱւստն  
լեզուի, յորոյ աւարտելն՝ զեղեցիկ ատենարանելով ի վերայ  
զիտութեան եւ առաքինութեան, արձակեաց զՀանդէսն քա-  
ջալերելով եւ օրհնելով զնոզարարձօ . Իշխանսն եւ գնաւու-  
ցիչս դպրոցին եւ զամենայն Հանդիսականս :

Ըստ այսմ նաեւ յեաշ եւ ի Ռօման ներկայ գտանելով նորին  
Սրբազնութիւնն Հարցաքննութեան իւրաքանչիւր վարժա-  
բանացն, եւ յամենայն ուսմանս արժանապէս յառաջադէմ  
նանդիսացեալ աշակերտացն՝ մեծապէս զօնութեամբ լցին  
զսիրտ գորովագութ Սուրբ Հօրն :

Առաքելաշառից Սրբազանն յետ մխիթարելոյ զժողովուրդ  
քաղաքիս իւրովն մեղրածորան բանից քարոզութեամբ եւ  
պէս պէս բարեկարգութեամբ զամիսս երկուս եւ կէս, ապա  
յ2/14, ապրիլի ամսոյս նովին պատուով եւ նանդիսիս նանա-  
պարնորդեաց աստի ի Սուչաւա քաղաք Պուզովինալու  
ուրանօր նոյնպէս մեծաւ շքով եւ պատրաստութեամբ ընկա-  
լաւ երկ ի Համազգեաց մերոց, եւ երկ յամենայն կարգէ Պաշ-  
տօնից Կայսերական կառավարութեանն, ըստ նրամանին  
Արքունի նետեւելոյ ի յանձնարարութենէ Պ. Պրոքշչի Աւստ-  
րիական Գեապանին Պօլսոյ :

Տես անցուցանելոյ Նորին Սրբազնութեան ի Սուչաւա  
զառուրս իրրեւ ննգեաասան, ապա ունի անդրէն դառնալ ընդ  
այս ի Ռօման եւ ի Պաքով, եւ փութալ ժամանել ի Կալաց,  
ի հիմնարկութիւն նորոզ շինելի Եկեղեցւոյն յանուն Ամենօրն-  
նեալ Սուրբ Աստուածածնին :

Եւ անա զայստիկ ստոյգ տեղեկութիւն որդիապատկան  
վատանութեամբ իրրեւ Հօր ճշմարտի եւ Ազգասիրի խոնար-  
համտութեամբ մատուցանելով ձեզ՝ Գերապատիւ Տէր, խընդ-  
րեմ ներողամիտ մարդասիրութեան ընդունիլ : Եւ երկ նաճոյ  
ինչ բուխից Տէրութեանդ սրբազնութեամբ եւ կամ համառօ-  
տելով ծանօթութիւն ինչ նազորդել ի սոցանէ կամ ոչ՝ ազգա-  
սեր ընթերցողաց ձեռքերէն Հայաստանեայց , այն ի կամս  
ողջամիտ դատողութեան ձերոյ մնայ ապաստան :

Իսկ եւ խոնարհեցուցեալ զգլուխ, եւ միանգամայն ընդ  
Պ. Ստեփանի Պալասանեան Ազնիս սիրելոյն՝ մեծարանօք  
համբոյր մատուցանելով ձեզ եւ Գերապատիւ Տ. Տ. Սարգիս  
եւ Խորեն Վարդապետաց Ազգասեր Սուրբ Հարց մերոց՝  
մնամ միշտ

Աստուածարեալ Սուրբ Հայրութեանդ

խորին երախտագիտութեամբ եւ ամենայն ակնածութեամբ  
բարեկցապարտ եւ ամենախոնարհ ծառայ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՅԱԿՈՎԷԼԱՆ

1858, Ապրիլի 7/19, ի Պօրիլան :

ԵԳԵՍԻՈՅ ՀԱՅԿԱԶՆԻՆԻ. — Գերապատիւ Իւրայել Վ.ին  
խնամօքը՝ Եղեւիոյ մէջ Քրիստոսեան ազգային միարանեալ  
նոր ընկերութիւն մը նաստատուեր է, որ եռանդուն ազգասի-  
րութեամբ եւ զովելի միարանութեամբ Եղեւիոյ վարժարաննե-  
րուն բարեկարգութեանն ու պայծառութեանը կը զբաղի :

ԳԵՐՁԱՆՅԻ ՀԱՅԿԱԶՆԻՆԻ. — Յարգոյ Թաղեոս Մ. Ս. Բազ-  
րատունին Մախա լրագրոյն ուղղած բերբիւն մէջ կատեռէ որ  
ուսումնասիրութեան սրայձառ արեգակը իր շառաւիղներովը

սկսեր է բաժանցել մինչեւ Հայաստանի խորերը : Գերջան  
զաւատն ալ որ դարերէ ի վեր ազիտութեան խոր քնոյ մէջ կը-  
ննջեր՝ սկսաւ սրափել, զովելի եռանդով մը վառուած իր կեն-  
սական օգտին զարձուսել իր բոլոր ուշադրութիւնը, եւ անոնք  
որ կարդան ինչ ընենք կըսէին՝ հիմա իրենց զաւակները ա-  
ռանց բանական դաստիարակութեան չեն ուզեր մեծցնել :  
Գերջանցիք իրենց արժանապատիւ առաջնորդ Առաքել Վ.ին  
խնամոց ներքեւ վարժարան մը կառուցին, եւ ի նշան իրենց  
կրօնասիրութեանը՝ խարխալեալ եկեղեցիներն վերանորոգեցին :

ՍԱՄՍՈՆԻ ՀԱՅԿԱԶՆԻՆԻ. — Սամսոնի անգղիական հիւպա-  
տութի բարգձման մեծապատիւ Չաքարեան Տէր Սարգիս, Փա-  
փագեան Տէր Գրիգորի եւ քանի մը հայ պատուաւոր վաճա-  
ռականաց նետ մեկտեղ ասկէց վեց եօրն ամիս առաջ զեղեցիկ  
դպրոց մը կառուցին ի կրթութիւն հայկազն մանկւոտն : Հա-  
քարեան Տէր Սարգիսն ըրած ազգասիրական գործքերը եւ ու-  
նեցած փոյրն եւ խնամքը բէ եկեղեցւոյն եւ բէ զպրոցին պայ-  
ծառութեանը համար մեծ զովեստի է արժանաւոր :

ԲԱԲԵՐԳՈՒ Ի ՀԱՅԿԱԶՆԻՆԻ. — Պօլսոյ մէջ գտնուող պա-  
տուաւոր Բարեկրցիք Յ դուռուշի տասն հազար անգորբազիր  
տալել տալով մեծ եռանդով կաշխատին դրամագլուխ մը պա-  
տրաստել՝ զոր պիտի գործածեն իրենց զաւառին Ս. Քրիստա-  
փոր անուամբ վանքին մէջ վարժարան մը բանալու, ուր ջորս  
կողմի զեղերեն ուսման յարմարութիւն ունեցող տղայք պիտի  
առնուն ժողովն ու ընտիր վարժապետներու ձեռքը կրբել տան :  
Տուսամք որ այս պատուաւոր հայրենասիրաց եռանդը զեղի-  
ցիկ պտուղներով պսակուի :

ՀԱՅԿԱԻՆՆԻ ՆՈՐԱՅԻՆԻՏ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Վանէն զըր-  
ւած նամակ մը լուր կուտայ բէ Վարազայ դիմացը Հայկառան  
ըստած լեռը այս օրերս փորուելով Գազիկ Արժրուսի Թազա-  
տրին տունը զտնուեր է բեւեռագիր հնութիւններով . եւ հիմա  
լեռը փորելը կշարունակուի վսեմափայլ կուսակալին հսկո-  
ղութեամբ : Առ այժմ գտնուածներն են՝ արքունի զանին  
բեւեռզարմանալի հնութեամբ . արձան մը որ ոսկեձող կկար-  
ծուի, եւ ուրիշ բաներ նեազնեաէ ելլելու վրայ են : (ՄԱՍՆԱ.)

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԵԱՅ ՄԷՋ ԵՐԳԵՃՈՆ ԳՈՐԾԱՅԵՒՈՒ ՎՐԱՅ.

Արգոյ Խմբագիր ՄԱՍՆԱՅ ԱՂԱՆԻՈՅ պատուական ամսագրին,  
Իզմիր, 20 Ապրիլ 1858.

Արշալուսոյ 567 բիւին մէջ Երգեհոնի յորդորնեւ ընդհանուր  
ազգայնոց ազգասիրական եռանդը զբգռուելով տղաչեցին մե-  
զի, որ ասանկ ընտիր առաջարկութիւն մը Ազգային միւս լը-  
րագրաց էջերուն մէջն ալ տեսնուի յաղագս ընդհանրական  
տարածման : Ասոր համար մենք ալ համարձակեցանք այս  
նամակը ձեզի յուղարկել, անկատկած յուսալով որ պատուա-  
կան Աղանուոյ բեւեռուն վրայ տեղ մը կը գտնէ յարգոյ ընթեր-  
ցողաց տեսնուելու :

Կեւ դարէ ի վեր է որ երբ Հայ մանկտին սկսաւ արբննալ  
եւ զիտութեան յոյսն աչքերը խողոյել, ամենուն բերնն զը-  
րերէ կը յտուեր. « ինչ կըլլայ մենք ալ եկեղեցիներ Երգեհոն  
գործածենք փոխանակ ծնծղայի : » Բայց ինչ օգուտ որ սրա-  
րօիչ արբիկի նման որ կը բոջտի եւ քիչ մը ատեն ծառերուն  
վրայ կենալով վերտին կաներեւութանայ՝ այս խօսքն ալ  
ասանկ կըտուեր, մեկ քանի վայրկեան խօսակցութեան նիւր  
ու ատիւր կըլլար, ու ետք վերտին կաներեւութանար : Ասոր  
երէ պատճառը փնտռելք կը գտնեմք որ Միարան Կառնու-  
րեան պատասխարինն է : Երբեմն երբեմն զանազան գործերու  
մէջ ազգասեր ոգի մը կը բունկի, կը բորբոքի, ամեն շանք ի  
գործ կը դնէ, մեկը կը համոզէ, միւսը կը համոզէ, բայց ի գուր  
որ ինքը միակ է :

Ասանկ ալ քանի քանի Ազգասեր անձեր եղան ազգիս մէջ  
Երգեհոն նաստատելու համար, քանի քանի անձեր այս բանս  
բազձացին եւ տակաւին կը բազձան, բայց ո՞վ անոնցմէ կըցաւ

իր բաղձանքին հասնի՛լ եւ ոչ մէկը մինչ ցայսօր. եւ արդեօր պատճառը ինչ է, Մխարան հաւանութեան պակասութիւնը:

Ասանկ ալ մենք ճիմակ կը ջանանք Հայոց եկեղեցիին մէջը Երզնէոն հաստատելու. « Մխարան հաւանութեան »: Մեր այս բաղձանքը Արշալուսի միջոցաւ հրատարակելով յայտնեցինք ազգիս, եւ որուն կողմանէ ընդհանօր լուսիբան մը տեսնելով (որ հաճութեան նշան է) քաջալերուեցանք եւ ուրիշ քազրաց մէջ ալ ուզեցինք զիտաւորութիւննիս զնել, որով եւ Ազգին կամքը հասկնալ:

Երբ մէկը Եւրոպական տաճար մը կը մտնէ ինչպէս չմիա-  
նար անոնց վսեմ ժամերգութենէն, եւ ինչպէս ջերմութեամբ  
բիւնը ջառնար Երզնէոնին հեշտ ներդաշնակութենէն: Եւրո-  
պայ Հէկից Սինակովային մէջն անգամ Երզնէոն կը գործածին,

եւ մենք զեւ. սասնկ .....՞ ձայներով շարունակենք մեր եկեղե-  
ցական ասմունքը:

Հին ժամանակը ինչ երաժշտական գործի որ կայ եղեր՝ գա-  
նոնք գործածը են նախնիք եկեղեցական պաշտամանց մէջ,  
ինչպէս ծնծղայն եւ այլն. ետքը երաժշտութեան արճեստը կա-  
տարելագործուելով Երզնէոն հնարեցաւ, որ ծնծղայն անկի  
զերպանց ըլլալով՝ հիմակ ալ պետք է զայն գործածենք:

Ի՛նչպէս պիտի պայծառանայ եւ վսեմնայ Հայոց եկեղեցա-  
կան ասմունքը երբ մանկանց հեզ ու չափաւոր ձայներուն  
հետ ընկերացեալ Երզնէոնով կատարուի Հայաստանեայց  
պաշտամունքը:

Մնամ ձերում Յարգութեան,  
նուսատ ծառայ  
ԳԱՒՈՒՅՏ ԿՈՍՏԱՆԴՆՈՆ


Հ Ա Ն Գ Ի Ս Ս Ր Ս Ն Ա Շ Խ Ս Ր Հ Ա Շ Է Ն Մ Ս Ր Գ Կ Ա Ն

Հ Ա Ս Ա Ն Ռ Ի Չ Ա Փ Ա Շ Ա .

HASSAN-RIZA PACHA.

Հասան Ռիզա փաշան ծնաւ 1812ին: Արքունեաց  
մէջ մեծնալով՝ շուտով իւր կատարելութիւնները Սուլ-

Hassan-Riza Pacha naquit en 1812. Elevé dans le  
palais, il ne tarda pas à se faire remarquer par le



Հ Ա Ս Ա Ն Ռ Ի Չ Ա Փ Ա Շ Ա . — HASSAN RIZA PACHA.

բան Մահմուտին ճանչցունել տուաւ, որ անոր այժ-  
խոյժ բնութեանը մէջ մտնելով գուշակեց ու տեսաւ այն  
մարդն՝ որ Էտրէրը գործի մէջ մեծ գործունեւութիւն

sultan Mahmoud. Devinant dans cette nature vive  
l'homme qui, plus tard, parvenu aux affaires, devait  
y déployer une si grande activité, ce souverain l'éleva,

պիտի բանեցրնէր . 1828ին զինքը սենեկապանութեան պաշտօնին հասուց, եւ քիչ ժամանակէն առանց մանուկ հասակին հայելու՝ առաջին սենեկապետ անուանեց : Այս դժուարին պաշտօնները տարնըմէկ տարի կատարեց Ռիզա, եւ զիստա իւր տիրոջը անբերի վըստահութեանն ու պաշտօնակցացը համարման ինքզինքը արժանի ընել : Ուստի եւ 1859ին Էրբոր Ապտիւլ-Մեհիտ բազաւորեց, զինքը մարաշախտ արքունեաց անուանեց . եւ հետզհետեւ հրամանատար կայսերական բիկնապահաց եւ ոստիկան պատերազմի : Այս մեծ պաշտօններու մէջ իւր կարգադիր հանձարն Էրեւան էլաւ : Ինքն էր որ ամենէն աւելի իւր ուղղազատ ու հաստատուն մտքովը կնկապընար ու ի գործ կղներ իւր բազաւորին բարեկարգութեան խորհուրդները . Երեք տարուան մէջ բոլորովին կարգաւորեց զօրքն եւ հինգ գնդի բաժնեց, որոնք միշտ կազմ եւ պատրաստ էին կայսերութեան ճր եւ իցէ կողմն հասնելու : Սահմանեց որ զինուորքը վիճակաւ ընտրուին, զինուորական պարտաւորեալ պաշտօնը հինգ տարի որոշեց, եւ զօրաւոր պահեստի գունդ մը կազմեց :

Իւր հաստատամտութենէն նուաճուած էկան զինուորագրեցան բոլոր զէնք կրելու կարողութիւն ունեցող մարդիկ : Սակալն այս զարգացման ու բարեկարգութեանց դեմտոգոնութիւններ էլան . հարկ էլաւ յառաջադիմութեան ընթացքը քիչ մը դադրեցընել , եւ Ռիզա վաշան առ ժամամակ մի գոն ընել անոր, որ տասնըհինգ ամիս գործքէ քաշուեցաւ : Վաճառակաճութեան եւ հասարակաց, շինուածոց ոստիկանութեան հասնելով, անոր մէջ էսա իւր խելքն ու գործունեութիւնը ցուցուց Ռիզա : Իրեն բոլորովին նոր Էդոմ նիւրին մէջ ալ շուտով առաջին կարգի օրհնագիտաց աստիճանն հասաւ, եւ Տանկաստանի վաճառակաճութեան օրինաց զիրքը պարգեւեց : Նորէն պատերազմի ոստիկան անուանեցաւ եւ սկսած զինուորական բարեկարգութիւնները տարուան մը մէջ շատ առաջ տարաւ, մինչեւ որ Գանութեան իշխանութեանց դժուարութիւնները դուրս էլան : Պուրսայի ու Սելանիկի կուսակալ կարգուելով, տարի մը կառավարեց այն գաւառը . եւ Էրբոր անճնական առողջութեանը համար հարկադրեցաւ քիչ մը քաշուիլ հանգըլի, հետը տարաւ բոլոր տեղացոց ցաւը : 1854ին մեծ ծովակալ անուանեցաւ, եւ Էրկու ամիս ետքը Էրբորդ անգամ ոստիկան պատերազմի, եւ զօրաց բարեկեցութեանը տարած խնամօքն այնչափ սիրելի էլաւ անոնց, որ շատ պարագաներու մէջ իբրեւ իրենց բարեբարը իւր անունը հռչակեցին, եւ մասնաւոր կերպով Նուսայի մէջ յորտ Ռակիանի եւ Սենր-Առնոյ մարաշախտին առջեւ : Նորէն գործքէ հեռացաւ,

en 1828, à la dignité de chambellan et bientôt, malgré sa jeunesse, à celle de premier chambellan. Pendant les onze années qu'il remplit ces fonctions délicates, Riza Pacha sut mériter la confiance entière de son maître et la considération de ses collègues. Aussi, quand, en 1839, Abdul-Medjid fut élevé à l'empire, il le nomma maréchal du palais, puis successivement, commandant en chef de la garde impériale et ministre de la guerre. C'est dans ces importantes fonctions que son génie ordonnateur se révéla tout entier. Ses vues droites et positives le rendaient plus propre que tout autre à saisir et à mettre à exécution les plans de réforme de son souverain. En trois ans, il organisa l'armée ; il la divisa en cinq corps toujours prêts à se porter sur les différents points de l'empire. Il institua le tirage au sort, fixa à cinq années la durée obligatoire du service militaire et établit une réserve considérable.

Subjugués par sa fermeté, tous les hommes en état de porter les armes vinrent sans murmurer se ranger sous les drapeaux. Cependant, au milieu des progrès rapides de la réforme, quelques mécontentements se manifestèrent ; un instant d'arrêt dans cette voie d'amélioration était nécessaire. Riza Pacha fut sacrifié pour un temps. Pendant quinze mois il resta éloigné des affaires. Appelé ensuite au ministère du commerce et des travaux publics, il y déploya la même intelligence et la même promptitude d'exécution. Dans une matière si nouvelle pour lui, il s'éleva presque aussitôt à la hauteur des publicistes les plus éminents et dota la Turquie du code de commerce. De nouveau ministre de la guerre pendant une année, il fut à même de mettre à profit l'organisation militaire qu'il avait créée quand des difficultés survinrent au sujet des Principautés Danubiennes. Il n'en fut pas moins destitué de ses fonctions et envoyé comme gouverneur à Brousse et Salonique. Pendant un an il administra cette province, et, quand sa santé le força de prendre du repos, il emporta dans sa retraite les regrets des populations. Nommé grand amiral en 1854 et deux mois après ministre de la guerre pour la troisième fois, les soins qu'il apporta au bien-être de l'armée lui gagnèrent l'affection des troupes, dont les acclamations le proclamèrent leur bienfaiteur en tant de circonstances et entre autres à Choumla en présence de lord Raglan et du maréchal de Saint-Arnaud. Éloigné de nouveau des affaires, rappelé et écarté

դարձեալ կանչուեցաւ. և քաղաքական դժուարութեանց համար վերստին պաշտօնէն ձգուեցաւ. բայց պատերազմի ոստիկանութեան մէջ այնչափ արդիւնք ցուցուցեր էր որ դիւրին չէր իրեն արժանի յաջորդ գտնել. ուստի և հինգերորդ անգամ Սերասրերութեան պատիւն ամբարձաւ, և մինչեւ ցայսօր իւր պաշտօնը կվարէ : Եռանդուն հայրենասիրութեամբ մշտավատ կենաց օգտուեալ ընթացքը կշարունակէ մեծանուն Ռիզա փաշա, և սկսած բարեկարգութիւններն օր ըստօրէ յառաջ կտանի նոյն գործունէութեամբ, նոյն կորովով և արագութեամբ իբրեւ թէ դարձեալ երիտա սարգական հասակին մէջ ըլլար, և արժանի կըլլայ մեծապէս իւր ազնուամիտ բագաւորին վստահութեանը, որ ոչ էրբէք վրայէն պակած է :

encore, à la suite de difficultés diplomatiques, l'importance qu'il avait donnée au ministère de la guerre était trop grande pour qu'on pût facilement lui trouver un successeur. Aussi fut-il, pour la cinquième fois, promu au séraskiérat, dont il exerce encore aujourd'hui les fonctions. Toujours animé du plus ardent patriotisme, il poursuit une carrière si bien remplie en consolidant de jour en jour l'œuvre de réforme qu'il a si promptement accomplie et en justifiant ainsi de plus en plus par la même activité, la même énergie, la même promptitude d'exécution que dans ses jeunes années, la confiance que n'a jamais cessé de lui témoigner son noble souverain.

Կ Ե Ն Յ Ա Ղ Օ Գ Ո Ւ Տ Բ Ա Ն Ք

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Ք.

Գարձընէնք աջբերնիս երկրիս վրայի բոյսերուն ու տունկերուն՝ և գարմանանք : Արդարեւ գարմանայի բաներ են այն բոյսերն, որ իրենց պտուղներովը զնէղ կսնուցանեն, ծարաւնիդ կանցընեն, գեղեցիկ տերեւներով գլուխնիդ շուք կընեն, գետինը կանաչ գորգով մը կպատեն, ուր աջբերնիդ կերբան կը կնանգջին ու կգուարձանան : Դիտեցէք անտարբեր աջօր էրէ կընար, սա ծաղկըներն որ կարիլ մը ցողով ու արեւուն ձառագայրովը կբուսնին, ցօղին գովութիւնը և արեւուն սլայծառութիւնը վրանին ունենալով, որ փայլվելու համար կարբըննան և ննջելու համար թերթերնին տերեւնին կամփոփեն, լուսով կգուարբանան կբացուին, և փոքորկին թիջ մը սաստիկ փչած բամիովը կբարշամին կմեռնին. մեր կենացը տրտմայի օրինակ. այսպէս վշտաց կամ հիւանդութեան թերեւ հողմովը մեր կեանքն ալ կը բարշամի կանցնի : Այս գոյնգոյն ծաղկըները ազնիւ շղաշատեռ մի են գոր աջ Տեառն երկրիս վրայ տարածած է. բարակաման ասղնէգործ մի է գոր դարերը կարող չեն մաշեցընել, այն դարերն որ հոյակապ Բարեկունը փոշոյ մէջ բաղեցին, հրաշակերտ Անին կոյտ անբակաց դարձուցին և հինաւորց Հոռովմայ գօրութիւնը խորտակեցին : Ո՛րչափ ալ ստեղ նայինք այս բնութեան տեսարաններուն վրայ՝ դարձեալ նոր ու գարմանայու արժանի բաներ կտեսնենք, և անոնք շատ անգամ սրտերնուս մէջ մեր մանկութեան յիշա-

տակներն արբընցընելով քաղցր ուրախութիւն մը, անմեղութեան ու երջանկութեան համը կուտան մեզ :

Ինչէր կան ըսելու նաեւ կենդանեաց վրայ, անոնց կազմութեանը, յատկութեանցը, բնական ազդեցութեանը, բնաորութեանցը, սովորութեանցն ու գործոցը, ևս և մեջերնէն անոնց վրայ որ իրենց սաստիկ փոքրկութեամբը գրեթէ աչքի ալ չեն էրեւար : Դիտէք արդէօք կարիլ մի շրոյն մէջ ճրջափ պզտիկ անասնիկներ կան. այնչափ որ քանի մը միլիոն մեկտեղ զգով՝ հազիւ կբնան առաջի մը հատին մեծութիւնն ունենալ. և սակայն այս ամենափոքրիկ արարածներն ալ իրենց համար ունին ջղեր, էրակներ, և շարժելու՝ սնունդ առնելու, անելու գործարաններ. ունին նաեւ իրենց համար սեր, ատելութիւն և մասնաւոր սովորութիւններ : Այս խտտաճարակ և մասկեր կենդանիք ալ իրենց Հայոց — Զորերն ունին, ուր Հայկեր ու Ներբովներ ստեղայի արխանանդ պատերազմներով իրարու կյաղրեն :

Գարձընէնք աջբերնիս պողիպողներուն՝ այսինքն Ովկիանոսի այն կենդանի ծաղկանց վրայ, որ նրբաբէլ բէնէզի ու գունազեղ նկարներու պէս սկաւառակաճեւ, հովանաբաճեւ ու ցցունաճեւ կբացուին : Դիտեցէք մեկ մը բազմարխ կակղամիս կենդանիները, տեսք վրանին ինչ գեղեցիկ ձեւեր ու գոյներ ունին, որ ոչ մեր ձարտարները կարող են այնպիսի վայելուչ բաներ շինել, ոչ ոսկերիչք այնպիսի գարդեր գործել,

Եւ ոչ նկարիչք այնպէս լուսոյ զարմանալի Երեւոյրներ ձեւացընել : Քննեցէք սարդի ոստայնը կամ մամուկը , որուն արտաքին տեսքէն կխորշիք ու ձարտարութեանը վրայ կգարմանար . բնեցէք նաեւ այն միջատներն որ գեղեցիկ պատմութեաններ , կապտագոյն բիկնոցներ , ծիրանեգոյն վերարկուներ , ճառագայրարձակ գէնքեր գրաններ , ոսկիէ՛ շափաղայէ ու գմբուխտե գարգմանակներ (սօրդուճ) ունին . մի՛ մոռնար նաեւ թիբեռնիկները , մեղուններն ու մըշխանները , այն բերեւընքաց Եւ աշխատասէր ժողովուրդները , որոց բեւերն մեր Արեւելքի երկրքին պէս բոցագոյն են , ինչ ձարտարութեամբ ու աշխատանքով կապրին ու քաղցրաբոյր հոտեր ձծելով կմեռնին :

Աւելի ալ բարձր էլլենք . օդոյն զարմանալի բնակիչներէն վեր , բարձրաբախչ արծուէն՝ մինչեւ փոքրիկ գեղավիտտուր բոջնաճանճը որ կարծես թէ գեղանշոյլ լուսոյ ճառագայրներով , ծաղկանց բերքերով ու զարնան շնչովը շինուած է . ընտանի ու վայրենի կենդանիներէն վեր՝ որք թեպէտ կազմութեամբ մարմնոց թիչ շատ մեզի կնմանին , բայց մեզի ծառայելու համար ստեղծուած են . էլլենք ասոնցմէ ալ վեր , գտներ մարդ ըսուած արարածը , այն հրաշալիքը որ ամեն օր տեսնելնուս համար մեզի մեծ բան չբեւնար . մեկ մը մարմնոյն զարմանալի կազմութիւնը դիտենք , յորում ոսկորներն սրանչելի մեքենական օրինօք շարուած գետեղուած են , յորում ջղերն ու զնդերքը (սինիլի էր) արագ՝ անվրէպ , բազմատեսակ պաշտօններ ու գործեր կկատարեն : Տեսէք սա կաւը որ տկար՝ վայելուչ ու միանգամայն գորաւոր շենքի մը պէս կանգնած՝ շունչ կառնէ կուտայ , անդադար կենդանութիւն ձծելով կըտարնայ , կենդանի օրեւան մի է , մեջը հոգի մը կբնակի . անիկա է մարդ ըսուածը . աշուրներովը տիեզերքը կջափէ ու կկշռէ . մտածմունքը անոր ձակտին վրայ կբազմի . երեսին վրայ ծաղկած ժպտալ երկնային քաղցրութեան մը պէս դիմացիներն սիրալ կափովէ . ձեռուրները կերկրնցընէ ու մեջէն հրամաններ կբափին . չորս դին անյայտ ու վսեմ բան մը կճառագայրէ որ կարծես թէ հոգւոյն արտաշնչութիւնն է , ու անդադար իւր ստեղծողին դիմել կուզէ : Բնութեան երկրորդ տեր մը ըլլալով , ուզածին պէս կձեւակերպէ գայն , ու հանձարոյն կնիքը վրան կըտպաւորէ : Իր ձայնին հնագանդելու դղրդին տիեզերք . ամենափոքր՝ ու միանգամայն ամենամեծ ու սոսկալի տարերք կյաղրուին իրմէ , ու կամացը կհնագանդին լեռներու որձարարը կկակղնայ , կտաշուի , այլ Եւ այլ ձեւեր կառնու , կրողու իւր բազմադարեան բնակարանն ու օտար աստեղաց տակ կերբայ կբնակի . մետաղները մոմի պէս կնային . սաստկաշառագ

շոգին տղու մը մատովը կաանձուի . կայծակը իւր փայլակներն ու անեղ սպառնալիքը մեկզի դրած՝ մարդուս հանձարոյն հրամանները լուխ մնշիկ կառնու . աշխարհքէ աշխարհք կտանի . իսկ ձարտարութիւնը ոսկեհուռ մետաքսապատ , երկաթէ ոտուրներով ու հրանիւր բեւերով՝ յաղբանակաւ երկրագնտիս վրայ կբայէ ու հնագանդ բնութեան բերքը կծողվէ :

Անա բոլոր այս բաներուս վրայ կարծէ որ խօսի մեր անխոնջ Աղանին , այնպիսի տեղեկութիւններ տայ որ իւր սիրելի ընթերցողաց միտքը բնապատմութեան օգտակար ու հարկաւոր գիտելեօքն ալ զարդարուի , որպէս զի կարող ըլլան իրենց տեսած հրաշալեաց վրայ խորհրդածութիւններ ընել , անտարբէր աչքով չտեսնել զանոնք , Եւ ամէն տեսած բաներէն օգուտ քաղել ու գուարձանայ : Եւ որպէս զի ընթերցողաց միտքը շատ ջյոզնի , բնութեան նկարագիրներուն մեջ ալ Եւ այլ անձինք ալ կրնան մտնել որ իրենց միջանկեալ խօսքերովն ու խորհրդածութեամբքը ոգի ու կենդանութիւն տան անոնց :

Պ . Արշակ , առաքինի ու բազմանմուտ ծերունին որդւոցը վրայ մեծ սէր ունենալով՝ անոնց դաստիարակութիւնն ուզէր էր անձամբ ընել . նոյնպէս իր վրայ առէր էր երկու որբացեալ եղբօրորդւոցը կրթութիւնը զորս սիրով իր բովը ժողվէր կխնամէր : Իւր որդեկացը անուանրն էին Տիգրան Եւ Սարինիկ , որ իրենց Մինրան Եւ Նրանիկ հօրեղբօրորդւոցը հետ խաղալու ստէն սիրուն խումբ մը կկազմէին :

Իւր օգտակար դասախօսութիւնները միանգամայն գուարձալի ընելու համար , պտրտելու ծամանակ՝ նկարագրած տեսարաններէն մեկուն մեջ կուտար դասերը : Բնութեան ուսումը արդէն ըստ ինքեան գուարձալի է , բայց աւելի գուարձալի ու դիւրիմաց կըլլայ թէ որ կանաչներու վրայ նստած , հովասուն հովանիներու տակ , ճառագարդ դաշտերու , Եւ կամ գեղատեսիլ բլրակներու վրայ սովորուի : Պ . Արշակին բնակարանէն թիչ մը հեռու բլրակի մը սաորտէն կարկաշաճոս առուակ մը կանցներ ուր բարձրաբերձ կաղնի մը կար՝ իրեն շատ սիրելի : Այն կաղնիին տակը շատ անգամ Պ . Արշակ իւր աշակերտներովը կնստէր , ինքը սիրով ու քաղցրութեամբ կխօսէր , Եւ քաղցրիկ սաներն ալ ուշադրութեամբ մտիկ կընէին :

Օր մը ըսաւ անոնց . « Որդեակք իմ , անա զարունը նորէն էկաւ , ասիկա այն եղանակն է՝ յորում բնութիւնը աւելի գուարք ուզոն կերպով մը գմեզ իւր բարիքը վայելելու կհրաւիրէ . յարմար ծամանակ է այս , շանանք մեր բարեբարը ձանչնայ : Իրացընէ , եբբոր տեսներ այն կենդանիներն որ խումբ խումբ դաշ-

տերու մեջ կպտըտին, լեռներու վրայ կեղին, անտառները կբնակին, Եւ այն՝ բռնեոց ու բռնեկաց բազմութիւնը որ քաղցրամայն երգերով օղը կլէցընեն. երբոր ջրերը կբացուին ու մեջի գոյնգոյն լողակները կտեսնենք. երբոր դալարագեղ դաշտի մը մեջ կըզանուինք Եւ կամ բուրաստան մը կմտնենք ու անուշանոտ ծաղկանց ակնապարար գեղեցկութիւնը կըտեսնենք, տաքակոյս ջկայ որ սրտերնուս մեջ փափաք մը կզգանք հողագետոյս մեջ գտնուած բնակիչները ձանջնայու, որոց գուլս դրեր է գմեզ Ստեղծողը : Թէ որ դիպուած մը ջնանդիպի՝ ընդհանրապէս երկրիս վրայ վարսուն տարիի ջտի կապրինք. միքէ ամօք ջԷ մարդուս որ իրեն համար ստեղծուած բաները ձանջնայու շանք ջուրնեայ : Իբրաւ է, անոնց մեջեն խիստ քիջը կրնանք ձանջնայ ու զխոնայ, բայց այն քիջ գիտցածնիս այ Գերագոյն Էակին վրայ ունեցած գաղափարնիս կմեծցընէ, ու կհասկըցընէ քէ ինչէր ըրեր է մեզի համար : Այս միայն բաւական է գմեզ մեր տգիտութենէն դուրս հանելու : Ուստի, սիրելի որդեակք, բանի որ օղերը գեղեցիկ են՝ ստեղծողէն ժուս գանք, Եւ շրջագալութիւննիս անելի գուարձալի ընելու համար օգտակար նիւթերու վրայ խօսակցիք : Վաղը առաւօտ կանուխ երբանք բլլրակին վրայ ելլենք, մեր սիրելի կաղնուոյն տակը նստինք, ու նոն արշալուսին գալուն սպասենք : Պատրաստութիւնը արեմն վաղուան :



**Ա.Ռ.Ա.**

ԿԱՅԾՈՒԽ ԵՒ ԽԵՈՒՆՁ (1).

Կայծոռիկը կույար կըսեր խըխունջին .  
 « Թող զիս, հոգիդ կըսիրես .  
 Խճջ վընաս Էմ ըրեր քեզ,  
 Որ ըսպաննել զիս դու կուգես ոխերիմ :  
 Թող, նն տըկար մեկն Էմ Եւ .  
 Թէ պըգտի յոյս մ'ալ ունիմ՝  
 Ինն համար ջէ, այոց համար կըվառիմ » :  
 — Խճջ . ինն վընաս ջես ըրած .  
 Անգուր խըխունջը պոռաց .  
 Հասպա ինչո՞ւ կըվառիս .  
 Ո՞ջ սպարեն որպէս զի զիս  
 Հասարակաց ցուցընես մութ ու տըգեղ :  
 Թէ որ դու յոյս ջունենայիր՝  
 Ու ինծի պէս մութ ըլլայիր,  
 Յայնժամ աջրիս կերեւնայիր դու անմեղ .  
 Եւ հիմ՝ ալ ոջ մեռանէիր » :

(1) Արեջ պեօճէյի. — Սիւմիւրիս պեօճէք.

Բարիք մ'ըրիր.  
 Նախանձոտին, զխոնաս, վընաս հասուցիր.  
 Վասընզի քու բարի գործրով  
 Կըցուցընես քէ ճւր է ինք բուկին քով .  
 Գու խօսարդ անուշ՝  
 Սըրտին է փուշ .  
 Գուկին համբաս  
 Իրեն պարսն . . .  
 Բարիքդ ըրէ , նվ ազգասեր,  
 Ու յոյս տալէ մի դաղարեր .  
 Թէ գրեզ նախանձ մարել ջանայ՝ մի վախնար .  
 Գու միշտ Էս յոյս, ինքն յանէլն. զիւր խաւար :

**ԳԻՏՈՒԹԻՒՆ ԶԵՆԱՅ.**

Ափ : — Ողորկ եւ ծառախիտ մատուցը : — Բայք, իր սղորնեքը, մեբոյք : — Այլ եւ այլ տեսակ ձեռք : — Նախնական կամ մեծափ ձեռն : — Կարնոր կամ բահիկաձեռն : — Արուեստային կամ կոնաձեռն : — Օգտակար կամ քառակուսի ձեռն : — Խմաստասիրական կամ ոստախիտ ձեռն : — Հոգեկան կամ սրածայր ձեռն : — Խառն ձեռն : — Չնոաց կարծուրեանն ու կակղութեանը վրայ դիտողութիւնը :

Մարդկային կազմութիւնը մտաց կենդանի, նիւրական Եւ անփոփոխ արտայայտութիւնն է : Ուստի Եւ ի ննուց ի վեր դիտած Էն իմաստունը մարդուս այս բնական արտայայտութիւնը, Եւ շանացեր Էն այն ըզգալի ծածկոյրը կարդայու, որպէս զի մեջը բնակող մտաւոր ու աննիւր հիւրն ձանջնան :

Կալ, Պրուսէ, Սփուրցնայմ, Ֆլուրենս Եւ այլք՝ մարդուս ուղեղը բնեցին, Լավարք՝ կերպարանքը, Սեռ՝ ոտըրը, Եւ մօտէրս Արփանքինէի՝ ձեռքին վրայ մասնաւոր բնութիւններ ըրաւ, գորս կուգեմք հոս համառօտել ի զիտութիւն :

Ափ : — Ափին վրայ նշանուած Էն մարդուս բնական Եւ շատ անգամ նաեւ մտաւոր ախորժակները :

Երբոր տիը շատ նիւար, բարակ նեղ ըլլայ, տկար Եւ անբեր բնութիւն կցուցընէ, պաղ ու անգօք էրեւակայութիւն Եւ զգացմունք :

Թէ որ ամիդ կակուղ է, հաստութիւնն ու լայնութիւնը՝ բոյք մատին Եւ միւս մատերուն համեմատ, ամեն գուարձութեանց յարմար Եւ, Եւ դիւրագրգիռ զգայարանը էրեւակայութեանը կարողութիւնները անդադար շարժման մեջ կպանեն :

Թէ որ հանգեքն կակղութեամբ՝ շատ խոշոր ըլլայ, տիրող յօժարութիւնները կըլլան անճնասիրութիւն Եւ մարմնասիրութիւն : Իսկ քէ որ այնպէս խոշոր ու լայն ըլլայ որ ամենէին մարմնոյն միւս մասանցը նետ ջհամեմատի, Եւ սաստիկ այ կարծր ըլլայ, առանց գաղափարի կենսականութիւն կցուցընէ :

Մասուկ : — Կան մատուցներ որ ողորկ են, կան որ ոստախիտ (պրուսազլը) են : Ոստախիտ Էողղներուն

մէջ եւս կան որ մի ոստ ունին, կան որ երկու: Նշանական ոստերը անոնք չեն որ շօշափմամբ միայն կիմացուին, այլ անոնք որ մեկէն աչքի կգարնեն:

Յի որ դուրս ցցուած ըլլայ այն ոստն որ մատիդ երբորդ ոսկրը (այսինքն այն որուն վրայ հաստատուած է ըղունգը) երկրորդ ոսկրին հետ կկապէ՝ դուրս ցցուած է, միտրդ կարգաւորեալ է. եւ թէ որ մատիդ երկրորդ ոսկրը առաջնոյն հետ կապող ոստը դուրս ցցուած է, նիւթական բաներու մէջ եւս մեծ կարգաւորութիւն ունիս, միանգամայն գիտութեան յարմարութիւն եւ ամեն բանի մէջ ճշդութիւն:

Անոստ մատուրներ ունեցողը ընդ հակառակն արեւտի յարմարութիւն կունենայ: Ոստախիտ մատուրն ունեցողներն աւելի ախորժակ եւ ընտրութիւն կունենան, իսկ ողորկ մատուրն ունեցողները աւելի կըմբռնեն գեղեցկութիւնն եւ վայելչութիւնը:

Բոյր: — Բոյր մատին արմատոյն վրայ է կամաց բնակարանը. եւ այս արմատն որչափ երկայն ու հաստ ըլլայ, այնչափ ալ կամրը սաստիկ կըլլայ:

Բրամատին առջի ոսկրին մէջ է տրամաբանութեան նշանը, այսինքն ըմբռնողութեան, դատողութեան եւ խորհրդածութեան: Եւ երկրորդին մէջ է հնարողութեան, որոշողութեան եւ սկզբնաւորութեան նշանը:

Երբոր այս ոսկրը նեղ, բարակ, ճոգած եւ կարճ ըլլայ, մարդն ամենեւին ինքն իրմէ որոշողութիւն չունենար, միշտ ուրիշի խելքին, կարծեացն ու մտածման գերի կըլլայ. ամեն բանի կտարակուսի, եւ վերջապէս բարոյական անհոգութեան մէջ կիյնայ:

Ընդհանրապէս պզտիկ, ճոգած ու խեղճ բոյր ունեցողը՝ անհաստատ խելք կունենայ եւ շատ անգամ ըրածը չգիտնար: Իսկ ընդ հակառակն խոշոր ու գեղեցիկ բոյր ունեցողը ըրածը զիտէ, մտածմունքը մէյմեկ օրէնք են, բայց բնութեամբ բռնաւոր կըլլայ, ճշմարտախոս է՝ բայց ոչ անկեղծ:

Փոքր բրամատն ունեցողները սրտով կկառավարւին, աւելի զգացմամբ կգործեն քան թէ մտածմունքով. ամեն բան վեր ի վերոյ կտեսնեն, ու ոչ երբէք տեսածնուն վրայ խորհրդածութիւն կընեն:

Մեծ բրամատն ունեցողները առաւելապէս զլիտով կկառավարուին, աւելի մտածմամբ կգործեն քան թէ զգացմամբ, եւ ամեն տեսածնուն վրայ խորհրդածութիւն կընեն:

Այլ եւ այլ ճեսակ Ձեռք: — Արփանքիներէ ձեռքը եօրը կարգ կբաժնէ, որք իրենց ձեռովը իրարմէ շատ կտարբերին: Եւ այսպէս կանուանէ զանոնք.

- 1° Նախնական կամ Մեծաի ձեռն.
- 2° Կարեւոր կամ Բահիկաձեռն ձեռն.
- 3° Արուեստային կամ Կոնաձեռն ձեռն.
- 4° Օգտակար կամ Բառավուսի ձեռն.
- 5° Ինաստախրա-

կան կամ Ոստախիտ ձեռն. 6° Հոգեկան կամ Մրածայր ձեռն. 7° Խառն ձեռն:

Այս ձեռքը ինչպէս նաեւ մարդկային այլ եւ այլ ցեղերը հազիւ երբէք թերեւ փոփոխութիւն կառնուն, եւ այն անբերեալք ձեռքը որ բոյր տիեզերքը կկարգէ կարգաւորէ, գիրենք միշտ իրենց նախնական ձեռին մէջ կպահէ, որով եւ այսօրուան մարդիկ նոյն եւ նման են Մովսէսի ժամանակն եղածներուն:

Այն ազգը որ այս ձեռքէն երկու երեք միայն ունի, ըստ գեղեցիկ բացատրութեան Արփանքիներէի, երկու երեք թէ միայն ունեցող քնարին կնմանի:

1° Նախնական ձեռն. — Այս տեսակ ձեռաց մատուրները խոշոր են եւ կարծր, բոյրը կրճատ եւ շատ անգամ կէս մը կլոր. բայց զլիսաւոր յատկութիւններն այն է որ ափերինն սաստիկ լայն, հաստ ու կարծր կըլլայ:

Եւրոպայի մէջ նախնական ձեռք ունեցողներն են սովորաբար երկրագործք, ձիապանք, բեռնակիրք, հասարակ զինուորք եւ այն ամենայն բանուորք, որոց արուեստին շատ մտաւոր կարողութիւն հարկաւոր չէ: Խիստ քիչ անգամ իրենք իրենցմէ խելք կբանեցընեն, դժուարաւ բան մը կըմբռնեն ու կհամոզուին, եւ ամեն գործողութիւն ունակութեամբ կընեն:

2° Կարեւոր կամ Բահիկաձեռն ձեռն. — Բահիկաձեռն կըսուին այն ձեռքերն որոց իւրաքանչիւր մատին երբորդ ոսկրը բահիկի (*մեկլազ*) կնմանի:

